27ՐԴ ՏԱՐԻ   ԹԻՒ 7500   21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

ՆՐԵՔՇԱԲԹԻ

3 Janvier 1910   27me année   N. 7500

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐԱՊԵՏ
ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՏ ՉԵՆ ՏՐՈՒԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՏԵՍՆԵԼ Դ. ԷՋԸ

Կ. Պոլիս Ղալաթիա

10 ՓԱՐԱ

# Արեւելք

ԱԶԳԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

10 PARAS

آرهولق
ارمنيجه يومى وسياسى غزته
صاحب امتيازى قره‌كين بوياجيان
درعليه غلطه

AREVELK
JOURNAL ARMENIEN
Directeur Propriétaire
Karekin Boyadjian
Cons/ple, Galata

## ԱԿՆԱՐԿՆԵՐ
### ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

(Շարունակութիւն եւ վերջ)

Հիմա կարգը եկած է Նեճիպ Մելհամեին որ այս անգամ օրհնութեան ուղերձ մը ղրկեց իր ուղէն Ջօհրապ էֆ.ին, եւ զանիկա իր «քաբերա՛ը»ը հռչակէ, որովհետեւ իրենց դատը կը պաշտպանէ անա՛ խորհրդարանին մէջ եւ կ'աշխատի մէյ մէկ լիմոդակ ասպականներ կապել տալ ի'ն եւակայիմ որ Նեճիպ արդէն սա լոպէին սեզանին գլուխը անցած ըլլալու է այս «կտակագիր»ը պատրաստելու համար, սակայն չեմ գիտեր որ ղաւակ ունի՞, անոնց ժառանգ ձգելու համար....

Երկու երախտաւորեալներ ահա՛ կը գտնան զիրար։ Երախտիք մը փոխադարձելու մէջ է մարդկային առաքինութիւններէն ամենէս քրիստոնէականը եւ Ջօհրապ ուղղափառ քրիստոնեայ մըն է։

...

ժամանան կոր Բալթողլեան Զամիչեանի հանած թուցիկները՝ յեղափոխականներուն դէմ անէծք արձակող եւ համիտական կառավարութեան հաւատարմութիւն ուխտող։ Ըսուեցաւ թէ Բալթողլեան ժուռնալ ալ տուած է Ազգ. Սահմանադրութիւնը չարափոխելու առաջարկութեամբ։ Ազատականները այսօր Ազգ. Սահմանադրութեան «քարացած» կը պոռան կոր, «օրուան պահանջներուն անհամաձայն է» կը պոռան կոր, Ազգ. Սահմանադրութիւնը փոխելու առաջարկին վրայ կը պնդեն կը յամառին կոր։ Ողբացեալ Հայրապետն Ազգ. Սահմանադրութեան տա՛ռը անգամ անփոփոխ, անայլայլ պահելու կողմն էր, որովհետեւ քաջ գիտէր որ եթէ մենք փոփոխենք Սահմանադրութիւնը, զանիկա վաւերացնելու ...

...

պատճառ այնքան եռանդով, ասդին Երիտասարդակ յոյսն՝ այսինքն Բարլամենթին մէջ Ջօհրապ Համիտ հայակեր բռնաւորներուն պաշտպանութիւնը կը ստանձնէ....

Կրկին տպագրութեան կ'ար-

...

է ժողովրդական վեհապետութիւնը պիտի սպաննուէր, իսկ երկրորդով՝ Ազգ. Սահմանադրութիւնը պիտի ջնջուէր։ Ազատական «օրէնսգէտ»ներ ձեր կոյր մոլեռանդութեանը մի զոհէք սա պատուաբեր, թանկագին աւան-

...

Սյս Ազգը, պարո՛ն զրպարտիչներ, չի՛ կրնար յարուցանել իր ծոցէն Տէրվիշ Վահտէթիներ, Քեոր Մուսթաֆաներ, Ալի Ճէմալներ։ Կը նա-

...

կութենէն խորշող երեսփոխանները կամուրջին գլուխը կախաղա՛ն հանուին, կամ կառավարութիւնը կասկածելի աչքով նայի անոնց։

ՃՇՄԱՐԻՏ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԸ

## Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
### ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ
### ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԷՋ

### Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ

Ինչպէս ծանուցած էինք, Կիրակի առաւօտ Գում-Գաբուի Մայր Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ մեր օրհնեալ Հայրապետին Տ. Տ. Մատթէոս կաթողիկոսի հոգեհանգստեան արարողութիւնը ամենաշքեղ հանդիսաւորութեամբ։

Պէտք է ըսել որ ոչինչ չէր խնայուած այս մեծ սգոյ արտայայտութիւնը իր արժանի մեծավայելչութեամբը կատարելու համար։

Տաճարը ամբողջովին լուսաւորուած էր անհամար կանթեղներով ու մոմերով, նոյնպէս խորանը կը շողար լոյսերու մէջ։

...

Հակառակ անոր որ օրբացեալ Հայրապետին յիշատակին հանդէպ տածած յարգանքէն մղուած Հայ ժողովուրդը կանուխէն գրաւած էր Պատրիարքարանի ամբողջ փողոցները, իր զանգուածովը բանակի մը երեւոյթն ընծայելով, հակառակ իր մէջ բովանդակող ամէն դասակարգի սուգ զանազանութեան, չփորձեց անկարգապահ արարքմը որ բաւէր ամէր օրուան ազգային մեծ սուգին վսեմութեանը։

Ոստիկանութիւնը ամէն կարգադրութիւն ըրած էր ի պատիւ ...

...

Ցանկ Պատրիարքին կողմէ Ներկայ էին Միտիլէնի առաջնորդ Մետրապոլիտ Տ. Կիրիլլոս, որ հրաւիրուեցաւ Նորին Սրբ. Պատր. Փոխանորդին տեղը, Պատր. Փոխանորդ Տ. Վէնիամին, Բաղ. Ժողովին Մ. Բազանովա, Զէթոս, Բռոսօուֆ արտօնատէր Սրանուտ եւ գործակատար Իքիտաիս էֆ. ներ։ Բուլղարական կողմէ ներկայ էր Ազգապետ Ցանկ էֆ. Գոյանեան։ Հրէից կողմէ ներկայ էր Խախամապետ Խայիմ Նահում էֆ. եւ գործակատարը, Բուլկարաց Էկզարքին կողմէ ներկայ էին Սինոդական Տ. Բոմանոս Մետրապոլիտը եւ պուլկարական կրօնից վարժարանին տնօրէն եկեղեցականը։ Ասորիներու Պատրիարքին կողմէ ներկայ էր Տ. Պօղոս։

Դեսպանական մարմնոյն կողմէ ներկայ էին՝ ռուսական դեսպանատան Ա. քարտուղար Մ. Գոֆզին, Բ. քարտուղար Մ. Սթրօթման եւ կցորդ Մ. Միլլէր. անգլիական դեսպանատան դեսպանատան կողմէ ներկայ էին Ա. Թարգման Մ. Ֆից Մորիս եւ քարտուղար մը։ Ֆրանսական դեսպանին կողմէ Մ. Պօք եւ հիւպատոսարանին կողմէ Մ. Նշան Գալֆայեան։ Ս. Մերիկեան կառավարութեան կողմէ հիւպատոսը եւ Ա. Թարգման Մ. Շմաւոնեան. պարսկական դեսպանին կողմէ Ա. Թարգման Ցովհաննէս Խան։ Հելլէն գործակատար Մ. Ալէքսանտրօբուլօս, ռումանական դեսպանին կողմէ ներկայ էր Մ. Ալֆոնս Միխայլ։ Օտար հրաւիրեալներուն մէջ կը գտնուէին նաեւ Մր. Փիթ, Օամ. եւ Բ. Լիտէի Լիօնէի պաշտօնէութեան անդամ. Նալթեանց կողմէ պաշտօնեաներ, Ռոպէրթ Գոլէճի Տնօրէն Մր. Կէյց իր տիկնով, պատուելի Մր. Պօէն եւ ուրիշներ։

...

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ   102

## ԸՆՏԱՆԻՔ, ՊԱՏԻՒ, ԲԱՐՈՅԱԿԱՆ
### (ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՐՔԵՐ)

Հեղինակ՝ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՀԻՆԳԵՐՈՐԴ

Նաւամատոյցին մօտ հասնելով, փափաք զգաց ծովեզերեայ ղրօսարանը նստելու եւ գարեջուր մը խմելու։ Վերջին օրերս կը զգուշանար գեղին մէջ գալրս ...

...

Կամուրջէն եկող շոգենաւը երբ մօտեցաւ նաւամատոյցին, Երանիկ սկսաւ դիտել ցուրտ ելլողները։

Ցանկարծ նշմարեց Ղուկաս էֆէնտին ...

...

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## ՍԹԱՄՊՈՒԼՈՎԻ ԴԱՀԼԻՃԻՆ ԽՆԴԻՐԸ

Սոֆիայէն դեկտ. 18 թուականով կը հեռագրեն թէ Սոպրանիյէի նոյն օրուան նիստին մէջ Պ. Կէնատիէֆ իր դէմ եղած ամբաստանութեան պատասխանելով յայտարարած է որ խորհրդարանական յանձնաժողովը, հակառակ ուրիշ երկիրներու մէջ հաստատուած սովորութեան, քննութիւն կատարած է, առանց լսել ուզելու նախորդ նախարարներու տալիք բացատրութիւնները, և այդ յանձնաժողովը եթէ այսպէս ըրած էր իր իրաւունքներուն ընդարձակութիւնը, անոնց սահմանը չգիտնալուն համար չէր, այլ որովհետեւ իր միակ նպատակը նախորդ դահլիճը տապալել էր։ Ցետոյ ցոյց տուած է այն պատճառները, որով նախորդ դահլիճը 1903ին ստիպուած էր պաշտօնատարներու վրայ գրուած օրէնքը առկախել, և այդ յետաձգումը եղած է Սօպրանիյէին առաջին նիստին մէջ տրուած հաւանութեամբը։ «Այն ատեն կառավարութիւնը չէր կրնար ժողովը հրաւիրել, յարեց նախակին նախարարը, որովհետեւ ստիպուած պիտի ըլլար միեւնոյն ատեն հաւանութեան ենթարկել դահլիճին տուած այն

## ՊԱՇՏՕՆԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԳՈՂՈՒԹԻՒՆ

Սոֆիայի օսմ. դեսպանատան դիւանատունէն կատարուած գողութիւնը վերջնապէս հաստատուած է։ Գողցուած պաշտօնագիրներուն թիւը վեցի կը հասնի, որուն մէկ հատը քաղաքական կարեւորութիւն ունի։ Այս վերջինը ծածկագիր վաւերագիր մըն է, բայց անոր բանալին օսմ. դեսպանատան մէջ կը գտնուի։ Բացուած քննութիւնը ոչ է արդիւնք չէ ունեցած։ Թուրք թերթի մը ըսածին նայելով, գողցուած պաշտօնաթուղթերը Պուլկարիոյ դէմ պատրաստուած պատերազմի յատակագիծներ են։ Այս պատճառաւ Պուլկարիա պէտք ստիպուի իր ռազմական յատակագիծերը փոխելու։ Պալքանի Սոֆիայի թղթակիցն ալ կ'ըսէ թէ մէկ քանի անարժէք պաշտօնաթուղթեր միայն գողցուած են։

## ՀԱՄԻՏԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլսէն Նոյէ Ֆրայէ Բրեսէի քաշուած հեռագրի մը համաձայն, Համիտի հիւանդութիւնը վտանգաւոր հանգամանք մը ստացած է։ Սելանիկի հիւպատոսներէն մէկը ծանուցած է թէ գոհընկեց Սուլթանը կը փափաքի Վիէննա փոխադրուիլ, եթէ երբեք Բ. Դուռը արտօնէ։ Նոյէ Ֆրայէ Բրեսէ կ'աւելցնէ. «Ցայտնի է թէ Համիտի առողջական վիճակը լաւ չէ և հոգեկան տարապանքներու մատնուած

նութեննէն այլ և այլ պարգեւներ, չահած են 49888 սերիէն 14 թիւեր, որոնք ծախուած են Ղալաթիա, Թիւչիւք թիւնէլ խան թիւ 7, Օսմանեան ժողովրդային Վարկի Գոմանտիթ ընկերութեան ու Ա. բաղի և Ընկ. միջոցաւ։ 49888 Սերիին պարտաթուղթերուն տէրերէն կը խնդրուի ներկայանալ վերոյիշեալ հասցէին, զանձելու համար իրենց վիճակած պարգեւները։

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐ

**ԶԵՂՉՈՒՄ.**— Այտընի հեռագրական և թղթատարական պաշտօնեայ Սաֆտէր էֆ. խոշոր գումար մը իւրացնելով խոյս տուած էր։ Քննութեամբ հաստատուած էր որ այդ պաշտօնեան 1100 ոսկի պարունակող քանի մը դրամածրարներ գողցած էր։

**ՕԹՕՄՕՊԻԼԻ ԱՐԿԱԾՆԵՐ.**— Անցեալ օր, Բերայի Մեծ փողոցէն անցնող օթօմօպիլ մը կոխոտեց երկու փոքր աղջիկներ, տասը և ութը տարեկան։ Վերջինին կեանքը վտանգի մէջ է։ Կառուղիղը ձերբակալուեցաւ, բայց իրիկուանը զատ արձակուեցաւ։

*** Օթօմօպիլի ուրիշ արկած մը պատահեցաւ Բանկալթի։ Օթօմօպիլ մը գընաց զարնուեցաւ Ջինուօրական վարժարանին զիմաց գտնուող խանութի մը, քառ ոսկիի վնաս պատճառելով։

# ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

## Աւուր Պատշաճի

Կիրակի օրուան ընդհանուր ու համազգային վշտակրութիւնը որուն փայլուն ու չքեղ արտայայտութիւնը եղաւ Գումգափուի Մայր եկեղեցիի մեծավայելուչ հոգեհանգիստը, յարգանքի ու համակրանքի ցոյց մըն էր ո՛չ միայն մեր մեծ ու պանծալի եպիսկոպոսապետին Մատթէոս Իզմիրլեանի յիշատակին նուիրուած, այլ նաև համօրէն Հայ Ազգին՝ որ իր անզուգական հովուապետը կ'ողբար։

Մահմետական, յոյն, հրեայ, բողոքական, պուլկար, ասորի կրօնապետները փութացած էին իրենց ներկայացուցիչները ղրկելու Մայր եկեղեցիի կամարներուն տակ, ուր կ'երեւային նաև նախարարա-

# ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

## ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱԼՊԱՆԻՈՅ ՄԷՋ

Շքօտրայէն Սքիւպի Ալպանացիներուն ուղղուած նամակներ կ'ըսեն թէ Մալիսօրները կառավարութեան հետ կը բանակցին սա պայմաններուն վրայ. Ա.— Իրենց յանձնած զէնքերուն փոխարժէքը վճարուի։ Բ.— Իրաւունք ունենան դըպրոցներ բանալու իրենց ուզած տեղերուն մէջ և ալպաներէն լեզուն ուսուցանեն, ինչպէս կ'ըլլայ մինչեւ հիմա։ Գ.— Այն տեղերուն մէջ, ուր կաթոլիկ է բնակչութիւնը, միւտիւրներն ալ այդ կրօնքին պատկանող մարդոցմէն անուանուին։

*** Անցեալ շաբթու, Կուօրնէի մօտ, զինուորներուն և Գարատաղ ապաստանած Ալպանիացիներուն միջեւ արիւնալից ընդհարում մը կատարուած է։ Ալպանացիներուն կ'օգնէին կարգ մը Գարատաղցիներ։ Երկու կողմէն ալ բաւական կորուստ կայ։

*** Քանի չափ փոքր հրոսախումբեր երեւան եկած են Հիւսիսային Ալպանիոյ մէջ։ Մասնաւոր ջոկատներ կազմուած են,

իրեն վրայ։ Բոլոր ներկաները, եկեղեցականներէն, նախարարները, դիւանագիտական մարմինը, վերջապէս եկեղեցիին մէջ գտնուողներուն ամէնքը մէկիկ մէկիկ գաց երթալով ցաւակցութիւն յայտնեցին Ն. Ամենապատուութեան։

## ՈՒՍԱՆՈՂԻՆ ԿԱՂԱՆԴԻՉԷՔԸ

# ԼՈՒՍԻՆԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

2 հատոր գեղչեալ 100 ղռ.ի մինչեւ Ցնվր. 15

### 1900 ՄԵԾԱԳԻՐ ԵՌԱՍԻՒՆԱԿ ԷՋԵՐՈՎ

Այս պատկերազարդ համայնագիտարանը զոր ամէն ֆրանսերէնի ուսանող կը ցանկայ ունենալ, Կաղանդի առթիւ զեղչուեցաւ ի դիւրութիւն զայն նուիրող ծընողաց և վարժարանի աշակերտութեանց, որոնց կը ներայ օգտուիլ այս գեղեցիկ առիթէն։

